ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 2-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կառավարության կառուցվածքի և գործունեության կարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ստեղծմամբ պայմանավորված քաղաքացիների և ներքին գործերի նախարարության ղեկավար կազմի միջև կապն ու սերտ համագործակցությունն ապահովելու, քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի և նրա տեղակալների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Քաղաքացիների ընդունելությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի հունվարի 15-ի թիվ 2-Լ հրամանով հաստատված կարգի պահանջների համաձայն՝ մինչև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության և կառուցվածքի հաստատումը:

3. Հրամանը հայտարարել իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Վ. ՂԱՋԱՐՅԱՆ

«24» 01 2023թ.

ք. Երևան

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
«24» 01 2023թ.
թիվ 2-Լ հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ՆԳ նախարարի և նրա տեղակալների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման

1. **ՀՀ Ներքին գործերի նախարար Վ.Ղազարյան՝** յուրաքանչյուր ամսվա չորրորդ շաբաթվա երրորդ օրը, ժամը 14:00-ից մինչև ժամը 16:00-ն:

2. **ՀՀ Ներքին գործերի նախարարի տեղակալ Ա.Սարգսյան՝** յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա երրորդ օրը, ժամը 16:00-ից մինչև ժամը 18:00-ն:

3. **ՀՀ Ներքին գործերի նախարարի տեղակալ Դ.Համբարյան՝** յուրաքանչյուր ամսվա երկրորդ շաբաթվա հինգերորդ օրը, ժամը 14:00-ից մինչև ժամը 16:00-ն:

4. **Ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալ Ա.Հովհաննիսյան՝** յուրաքանչյուր ամսվա չորրորդ շաբաթվա երրորդ օրը, ժամը 16:00-ից մինչև ժամը 18:00-ն:

5. **Փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ Կ.Ցուցուլյան՝** յուրաքանչյուր ամսվա երրորդ շաբաթվա երկրորդ օրը, ժամը 16:00-ից մինչև ժամը 18:00-ն /ընդունելությունն իրականացվում է ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության շենքում ք.Երևան Դավիթաշեն 4-րդ թաղամաս, Ա.Միկոյան 109/8/: